«ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳԻՐ

ԹԻՐԱԽԱՅԻՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Առաջնային ոլորտների և խնդիրների վերջնականացման ընթացքում ծրագիրը օգտվել է հետևյալից.

- Արևելյան Գործընկերություն. կենտրոնանալով առանցքային առաջնահերթությունների և արդյունքների վրա («2020» փաստաթուղթ),
- ԵՄՊ-ի կողմից ԻՀԱ-ին տրամադրված ֆինանսական համաձայնագրեր և հարակից փաստաթղթեր,
- Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր («CEPA»),
- 2017-2022 ՀՀ կառավարության ծրագիր (ՀՀ կառավարության ծրագիր),
- ՔՀԿ-ների՝ առաջնային խնդիրների գնահատումները, հիմնականում ֆոկուսային խմբերով քննարկումներ, հիմքում՝ քարտեզագրման հետազոտությունը, որն իրականացվել՝ ծրագրի կողմից 2017-ին,
- ԵՄՊ-ի առաջարկություններ,
- Վերջին միտումներ։

Ծրագիրը նաև հաշվի է առել կոնսորցիումի անդամների ոլորտային փորձառությունը, քանի որ նրանց փորձը կենտրոնացված է 4 ոլորտների վրա (արդարադատություն, կրթություն, բիզնես և տեղական ինքնակառավարում), մինչդեռ ծրագիրն ընդհանուր առմամբ կծածկի 9 ոլորտ։

Ստորև ներկայացված են առաջարկվող 9 ոլորտները և խնդիրները (յուրաքանչյուր ոլորտի համար առնվազն մեկ խնդիր), ինչպես նաև յուրաքանչյուր ոլորտի ընտրության հակիրճ ամփոփում և բարեփոխումների ներկա իրավիճակը։ Որտեղ մեկից ավելի խնդիրներ են թվարկված, հիմնական թիրախ համարվում է առաջինը, և եթե իրականացնող ՔՀԿ կոալիցիան կարող է նաև մասնակցել/ազդել մյուս խնդիրների վրա, ապա դա կլինի հավելյալ օգուտ։

ՈԼՈՐՏ 1. ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Խնդիրներ.

1.1. **Խոցելի խմբերի համար արդարադատության հասանելիության բարելավման անհրաժեշտություն՝ ներառյալ հանրային պաշտպանի ինստիտուտի ուժեղացումը:**

- Նախատեսված է *Կառավարության ծրագրում,*
  - ներդնել Pro-bono իրավաբանական ծառայություններ մատուցող անձանց խրախուսման մեխանիզմներ.
  - ընդլայնել անվճար իրավաբանական օգնության տրամադրման շրջանակները, մասնավորապես, գույքային (գումարի) պահանջով գործերի համար նախատեսված անվճար իրավաբանական օգնություն ստանալու համար գումարային սահմանափակման նվազագույն շեմը բարձրացնել՝ նվազագույն աշխատավարձի հազար հինգ հարյուրապատիկի.
  - անվճար իրավաբանական օգնության տրամադրմանը զուգահեռ ՀՀ փաստաբանների պալատի հետ համատեղ ներդնել մատչելի իրավաբանական օգնության մատուցման համար անհրաժեշտ իրավական և ինստի- տուցիոնալ կառուցակարգեր.
  - փաստաբանների համար ներդնել իրավաբանական սխալից պարտադիր ապահովագրության ինստիտուտը՝ մշակելով չափանիշներ մասնագիտական սխալից առաջացած վնասի հատուցման համար:
- Բարձրացվել է *ֆոկուսային խմբերով* քննարկումների ընթացքում:

1.2. **Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության բարելավման անհրաժեշտություն:**

- Նախատեսված է «*CEPA»-ում,*
- Նախատեսված է *«Արևելյան Գործընկերություն. կենտրոնանալով առանցքային առաջնահերթությունների և արդյունքների վրա»/«2020» փաստաթղթում,*
- Նախատեսված է *Կառավարության ծրագրում.*
  - Կատարման գործողությունների ժամկետների հստակեցում և կրճատում՝ ներառյալ փորձագիտական քննությունները;
  - Այն բանի ապահովում, որ փաստաթուղթը էլեկտրոնային ճանապարհով անցնի հարկադիր կատարման պաշտոնյաներից կատարողական վարույթների մասնակիցներին;
  - Կատարման որոշակի գործողությունների համար տեսաձայնագրման ներդրում;
  - Դատարանների և Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջև էլեկտրոնային համակարգի ստեղծում՝ վերացնելով դատավարության մասնակիցներին ծանուցագրեր տրամադրելու գործընթացը:
- Բարձրացվել է *ֆոկուսային խմբերով* քննարկումների ընթացքում:

1.3. **Դատական համակարգում էթիկայի վարքագծի բարելավման անհրաժեշտություն:**

- Նախատեսված է *«2020» փաստաթղթում՝ Բաժին 10. Առանցքային դատական բարեփոխումների իրականացում.*
    - Արդյունավետ կարգապահական և էթիկայի կանոնների ընդունում՝ դատավորների և դատախազների համար ԵՄ ստանդարտներին համապատասխան,
    - Դատական համակարգի ներկայացուցիչների համապարփակ և արդյունավետ վերապատրաստում՝ դատական իրավասությունների և էթիկայի շուրջ,
    - Հանրությանը հասանելի գործուն բողոքարկման մեխանիզմների ներդրում:

1.4. ՀՀ իրավական և դատական բարեփոխումների ծրագրի բարելավման անհրաժեշտություն, մասնագիտացված ՔՀԿ-ների մասնակցության մեխանիզմների թույլ մակարդակ ՀՀ իրավական և դատական բարեփոխումների ծրագրի մշակման, բարելավման, մշտադիտարկման և ջատագովության իրականացման գործընթացներում: ՀՀ իրավական և դատական բարեփոխումների ծրագրի մշակման և (կամ) բարելավման, մշտադիտարկման, ջատագովության գործընթացներում մասնագիտացված ՔՀԿ-ների ավելի մեծ ներգրավվածության ապահովման անհրաժեշտություն:

- Բարձրացվել է *ֆոկուսային խմբերով* քննարկումների ընթացքում:

- Նախատեսված է *Կառավարության ծրագրում.*
    - մշակել ՀՀ իրավական և դատական բարեփոխումների նոր ռազմավարություն և դրանից բխող գործողությունների ծրագիր.
    - բարձրագույն դատական խորհրդի (համաձայնությամբ) հետ համատեղ զարգացնել դատարանների համապարփակ էլեկտրոնային կառավարման համակարգը:
    - իրականացնել «Դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքից բխող անհրաժեշտ միջոցառումներ, այդ թվում՝ նորմատիվ իրավական ակտերի մշակման աշխատանքներ.
- Նախատեսված է *«2020» փաստաթղթում՝ Բաժին 10,*
    - Ներառյալ՝ քաղաքացիական և քրեական գործերով դատարանների ծանրաբեռնվածության և դատական գործերի տևողության ժամկետների զգալի կրճատում:
- Նախատեսված է *«CEPA»-ում,*
    - Մասնավորապես վերաբերվում է արդար դատաքննության իրավունքի իրացմանը, դատարանների հասանելիությանը, դատական համակարգի արդյունավետությանը, դատարանների անկախությանը և այլն:

1.5. Պրոբացիայի ինստիտուտի բարելավման անհրաժեշտություն, մասնագիտացված ՔՀԿ-ների մասնակցության մեխանիզմների թույլ մակարդակ պրոբացիայի ինստիտուտի բարելավման, մշտադիտարկման և ջատագովության իրականացման

գործընթացներում: Պրոբացիայի ինստիտուտի բարելավման, մշտադիտարկման, ջատագովության գործընթացներում մասնագիտացված ՔՀԿ-ների ավելի մեծ ներգրավվածության ապահովման անհրաժեշտություն:

- Նախատեսված է *Կառավարության ծրագրում.*
  - ապահովել պրոբացիայի պետական ծառայության կողմից իրականացվող էլեկտրոնային հսկողության համակարգի գործարկումը՝ ըստ փուլերի.
  - իրականացնել պրոբացիայի պետական ծառայությունում վերասոցիալականացման ծրագրեր՝ շահառուների առնվազն 30 տոկոսի ներգրավմամբ.
  - ապահովել կալանավորման այլընտրանքային խափանման միջոցների կիրարկումը.
  - ամբողջական իրականացնել գործնականում պրոբացիայի պետական ծառայության գործառույթները և զարգացնել ու կատարելագործել ծառայության կարողությունները:
- Բարձրացվել է *ֆոկուսային խմբերով* քննարկումների ընթացքում:

ՈԼՈՐՏ 2. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Խնդիրներ.

1.1. **Խտրականության դեմ պայքարի հանրային քաղաքականությունների մշակման և (կամ) բարելավման անհրաժեշտություն՝ ներառյալ ոլորտի օրենսդրական կարգավորումները և հաշմանդամություն ունեցող անձանց խնդիրների լուծումները:**

1.3. **Դատավորների համար հակախտրականության օրենսդրության կիրառման ընթացակարգերի բարելավման անհրաժեշտություն՝ ներառյալ ընթացակարգային ուղեցույցի ընդունման անհրաժեշտությունը:**

1.4. **Պետական կառույցների կողմից խտրականության դեմ պայքարի ներքին ուղենիշների բարելավում՝ առնվազն 3 պետական կառույցներում դրանց ներդրման անհրաժեշտություն:**

- Բարձրացվել է *ֆոկուսային խմբերով* քննարկումներում,
- Նախատեսված է «*Մարդու իրավունքների բյուջետային աջակցություն» ֆինանսական համաձայնագրում,*
  - Խտրականության դեմ առանձին օրենսդրության ընդունում,
  - Դատավորների համար ընթացակարգային ուղեցույցի ընդունում՝ Խտրականության դեմ առանձին համապարփակ օրենսդրության կիրառման շուրջ,
  - Մարդու իրավունքների պաշտպանին մանդատի տրամադրում հետևյալի համար.

- Սահմանադրական դատարանին «դատարանի ընկերոջ» /Amicus Curiae/ ներկայացման համար,
- Խտրականության դեմ պայքարում ուղենշային փաստաթղթերի մշակում,
- Հանրային գիտակցության բարձրացման արշավներ խտրականությանն առնչվող խնդիրների շուրջ,
- Խտրականության ենթադրյալ դեպքերում քննություն սկսելու լիազորություն,
- Անկախ զեկույցների առաջարկությունների ներկայացում:

➢ Նախատեսված է «*2020» փաստաթղթում՝ Բաժին 2. Գենդերային հավասարություն և հակախտրականություն.*
  - o Խտրականության դեմ օրենսդրություն՝ մնացած գործընկեր երկրներում ընդունված/առաջընթաց համապատասխան օրենսդրության ներդաշնակեցման հարցում,
  - o Ստեղծված հավասարության մարմինների գրանցած հաջողություններ և խտրականության դեմ օրենքի արդյունավետ մշտադիտարկում:

1.2. **Հաշմանդամություն ունեցող անձանց համար համայնքահեն ծառայությունների բարելավման և մշտադիտարկման անհրաժեշտություն՝ ներառյալ ՔՀԿ-ների համար մշտադիտարկման գործիքի բացակայությունը և դրա մշակման անհրաժեշտությունը:**

➢ Բարձրացվել է *ֆոկուսային խմբերով* քննարկումների ընթացքում:
➢ Ներառված է՝ *ԵՄՊ-ի առաջարկության հիման վրա:*

1.5. **Իրավապաշտպանների դեմ սպառնալիքների մշտադիտարկման անհրաժեշտություն:**

➢ Բարձրացվել է *ֆոկուսային խմբերով* քննարկումների ընթացքում:
➢ Ներառված է՝ *ԵՄՊ-ի առաջարկության հիման վրա:*

ՈԼՈՐՏ 3. ՀԱՆՐԱՅԻՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Խնդիրներ.

1.1. **Երեխաների և գենդերային զգայուն բյուջետավորման արդյունավետ մեխանիզմների թույլ մակարդակ ազգային և տեղական մակարդակներում, ինչպես նաև ՔՀԿ-ների և ՔՀԿ-ների կոալիցիաների շրջանում: Այդ մեխանիզմների բարելավման, մշտադիտարկման, ջատագովության և դրանցում ՔՀԿ-ների ավելի մեծ ներգրավվածության ապահովման անհրաժեշտություն:**

Գենդերային զգայուն բյուջետավորումը մի մոտեցում է, որը մշակվել է՝ գենդերային բաղկացուցիչը բյուջետային շրջապտույտի բոլոր փուլերում տարածելով: Այն վերաբերում է

գենդերային զգայուն տեսանկյունից բյուջեների մշակման, պլանավորման, հաստատման, իրականացման, մշտադիտարկման, վերլուծության և աուդիտի գործընթացին: Այն ներառում է կանանց և աղջիկների վրա կատարված իրական ծախսերի վերլուծությունը՝ համեմատած տղամարդկանց և տղաների հետ՝ հաշվի առնելով նրանց տարբեր կարիքները և առաջնահերթությունները: Այն օգնում է որոշել՝ ինչպես ռազմավարությունները պետք է մշակվեն, փոփոխվեն և վերահաստատվեն առաջնահերթությունները: Այն քաղաքականության իրականացման արդյունավետ գործիք է, որտեղ կարելի է ստուգել՝ արդյոք հատկացումները համապատասխանում են քաղաքականությունների հանձնառություններին և ունենում են ցանկալի ազդեցություն:

- Նախատեսված է «*CEPA*»-ում ավելի ընդհանրական իմաստով (գենդերային հավասարություն),
- Նախատեսված է «*2020» փաստաթղթում՝ Բաժին 2. Գենդերային հավասարություն և հակախտրականություն* ավելի ընդհանրական իմաստով (գենդերային հավասարություն),
- Բարձրացվել է *ֆոկուսային խմբով* քննարկման ընթացքում ավելի ընդհանրական իմաստով (գենդերային հավասարություն),
- Նախատեսված է *«Հանրային ֆինանսների քաղաքականության բարեփոխում» ֆինանսական համաձայնագիր* ավելի կոնկրետ ձևով:

1.2. **ՔՀԿ-ների մասնակցության մեխանիզմների թույլ մակարդակ դյուրացված ՀՀ պետական բյուջեի վերաբերյալ քննարկումների և հանրայնացման գործընթացներում: Այդ մեխանիզմների բարելավման, մշտադիտարկման, ջատագովության և դրանցում ՔՀԿ-ների ավելի մեծ ներգրավվածության ապահովման անհրաժեշտություն:**

- Նախատեսված է *«Հանրային ֆինանսների քաղաքականության բարեփոխում» ֆինանսական համաձայնագրում.*
    - Պարզեցված պետական բյուջեի հրապարակում՝ միջազգային ստանդարտներին համապատասխան,
    - Պարզեցված պետական բյուջեի քննարկում ՔՀԿ-ների հետ:
- Նախատեսված է «*2020» փաստաթղթում՝ Բաժին 11. Հանրային կառավարման բարեփոխումների իրականացում.*
    - Հանրային ֆինանսների կառավարման բարելավում և թափանցիկություն».

ՈԼՈՐՏ 4. ԲԻԶՆԵՍ

Խնդիրներ.

1.1. **ՓՄՁ ռազմավարության բարելավման անհրաժեշտություն, ՔՀԿ-ների և Բիզնես ասոցիացիաների մասնակցության մեխանիզմների թույլ մակարդակ ՓՄՁ**

ռազմավարության մշակման, բարելավման, մշտադիտարկման և ջատագովության իրականացման գործընթացներում՝ ներառյալ ստորև առանձնացված խնդիրները: ՓՄՁ ռազմավարության մշակման և (կամ) բարելավման, մշտադիտարկման, ջատագովության գործընթացներում ՔՀԿ-ների և Բիզնես ասոցիացիաների ավելի մեծ ներգրավվածության ապահովման անհրաժեշտություն:

- Նախատեսված է *«ՓՄՁ զարգացում» ֆինանսական համաձայնագրում,*
- Նախատեսված է *«2020» փաստաթղթում՝ Բաժին 4. Տնտեսական զարգացում – կարգավորիչ միջավայր.*
    - ՓՄՁ ռազմավարությունների և գործողությունների պլանների/ճանապարհային քարտեզների ընդունում:
- Նախատեսված է *«CEPA»-ում.*
    - ՓՄՁ զարգացման ռազմավարությունների իրականացում՝ հիմնված Եվրոպայի համաև փոքր բիզնեսների ակտի սկզբունքների վրա,
    - Կանոնավոր հաշվետվությունների և երկխոսության միջոցով իրականացման գործընթացի մշտադիտարկում:
- Բարձրացվել է *ֆոկուսային խմբերով* քննարկումներում:

1.2. Գործարարների շահերի պաշտպանի (Բիզնես Օմբուդսմեն) ինստիտուտի ներդրման շուրջ երկխոսության իրականացման անհրաժեշտություն:

- Նախատեսված է *Կառավարության ծրագրում,*
    - «Գործարարների շահերի պաշտպանի մասին» ՀՀ օրենքի մշակում և գործարարների շահերի պաշտպանի ինստիտուտի ներդրում՝ որպես գործարարների խախտված կամ վիճարկվող իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության, ինչպես նաև վեճերի կարգավորման արդյունավետ այլընտրանքային միջոց:
- Բարձրացվել է *ֆոկուսային խմբերով* քննարկումներում:

1.3. Ձեռնարկատիրական կրթության քաղաքականության բարելավման և իրականացման անհրաժեշտություն՝ ներառյալ սոցիալական ձեռնարկատիրության կրթության ուսումնական ծրագրի մշակումը:

- Նախատեսված է *«ՓՄՁ զարգացում» ֆինանսական համաձայնագրում,*
- Նախատեսված է *«2020» փաստաթղթում՝ Բաժին 18. Երիտասարդության առաջնորդության և ձեռնարկատիրություն.*
    - Երիտասարդության/սոցիալական ձեռնարկատիրության խթանում,

- Նախատեսված է *Կառավարության ծրագրում.*
    - Ֆինանսական և ձեռնարկատիրական կրթության տարրերի ներդրում հանրակրթական հաստատություններում:
- Բարձրացվել է *ֆոկուսային խմբերով* քննարկումներում:

ՈԼՈՐՏ 5. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Խնդիրներ.

1.1. Միջին մասնագիտական կրթության և ուսուցման ու աշխատաշուկայի միջև կապի բարելավման անհրաժեշտություն՝ ներառյալ դրան ուղղված նոր ռազմավարական մոտեցման մշակումը:

- Նախատեսված է «*CEPA»-ում* ավելի ընդհանուր իմաստով,
- Նախատեսված է *Կառավարության ծրագրում.*
    - Միջին մասնագիտական կրթության և վերապատրաստման արդիականացում գյուղատնտեսությունում պետական կրթական (որակավորման) ստանդարտների և համապատասխան ուսումնական ծրագրերի մշակում և ներդրում միջին մասնագիտական կրթության և վերապատրաստման մեջ,
    - Համապատասխան մասնագետներով կարիերայի ուղղորդման ստորաբաժանումների հիմնադրում՝ միջին մասնագիտական կրթության և վերապատրաստման հաստատություններում:
- Նախատեսված է «*2020» փաստաթղթում՝ Բաժին 18. Երիտասարդության առաջնորդության և ձեռնարկատիրություն.*
    - Միջին մասնագիտական կրթության և վերապատրաստման գրավչության և որակի բարելավում, մասնավորապես՝ համապատասխանությունն աշխատաշուկայի կարիքներին:
- Բարձրացվել է *ֆոկուսային խմբերով* քննարկումներում:

1.2. Դպրոցներում կարիերային առնչվող խորհրդատվության համակարգի բարելավման, մշտադիտարկման և ջատագովության անհրաժեշտություն:

- Նախատեսված է *Կառավարության ծրագրում.*
    - Միջին մասնագիտական կրթության և վերապատրաստման հաստատություններում կարիերայի ուղղորդման ստորաբաժանումների հիմնադրում՝ համապատասխան մասնագետներով:

- Բարձրացվել է *ֆոկուսային խմբերով* քննարկումներում:

ՈԼՈՐՏ 6. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏ

Խնդիրներ.

1.1. Հաշմանդամություն ունեցող երեխաների սոցիալական ներառման մշտադիտարկման միջոցով առանցքային խնդիրների գնահատման, հանրային քաղաքականությունների մշակման և (կամ) բարելավման, ինչպես նաև բարեփոխումների իրականացման ջատագովության անհրաժեշտություն:

- Նախատեսված է *Կառավարության ծրագրում*.

o Տեղական օրենսդրության համապատասխանեցում ՄԱԿ-ի՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոնվենցիայի պահանջներին.
  - «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» օրենքի ընդունում,
  - ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հասանելիության պայմանների խախտման համար վարչական պատասխանատվության սահմանում, ինչպես նաև հասանելիության պայմանների պահանջներին չհամապատասխանելու դեպքում:

1.2. Համայնքներում տեղակայված աջակցության կենտրոնների ներդրման բարելավման, մշտադիտարկման և ջատագովության իրականացման անհրաժեշտություն:

- Բարձրացվել է *ֆոկուսային խմբերով* քննարկումների ընթացքում:
- Ներառված է *ԵՄՊ-ի առաջարկության* հիման վրա:

ՈԼՈՐՏ 7. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Խնդիրներ.

1.1. Խաչաձև՝ էլեկտրոնային գյուղատնտեսության բարելավման և զարգացման անհրաժեշտություն:

Էլեկտրոնային գյուղատնտեսությունը ներառում է գյուղական ոլորտում ինֆորմացիոն և հաղորդակցության տեխնոլոգիաների օգտագործման նորարարական ուղիների հայեցակարգային ձևակերպում, մշակում, զարգացում, գնահատում և կիրառում՝ հիմնական շեշտը դնելով գյուղատնտեսության վրա:

- Նախատեսված է «*CEPA»-ում* ավելի ընդհանրական իմաստով.

- Գիտելիքի և լավագույն փորձի տարածում գյուղական զարգացման քաղաքականությունների առումով՝ գյուղական համայնքներում տնտեսական բարեկեցությունը խրախուսելու համար,
- Գյուղատնտեսական արտադրության մոդեռնիզացման խթանում:

1.2. Գյուղատնտեսության ոլորտում կանանց ձեռնարկատիրության, ինչպես նաև նեղ մասնագիտացված շուկաների և օրգանական գյուղատնտեսության զարգացման անհրաժեշտություն:

- Բարձրացվել է *ֆոկուսային խմբերով* քննարկումներում:
- Ներառված է՝ *ԵՄՊ-ի առաջարկության* հիման վրա:

1.3. Գյուղատնտեսական կոոպերատիվների համար արդյունավետ կարգավորիչ համակարգի բարելավման և զարգացման անհրաժեշտություն:

- Նախատեսված է *«2020» փաստաթղթում՝ Բաժին 6. Աշխատանքի նոր հնարավորություններ տեղական և մարզային մակարդակում*
  - Բիզնես ուղղվածությամբ խմբերում/կոոպերատիվներում գյուղատնտեսների մասնակցության շարունակական աճ (2020 թ. դրությամբ առնվազն 15 000 գյուղատնտեսները բիզնես ուղղվածությամբ գյուղատնտեսների խմբերի/կոոպերատիվների անդամներ են; առնվազն 1 000 բիզնես ուղղվածությամբ գյուղատնտեսների խմբեր են ստեղծվել՝ խթանելու համար ավելի լավ շուկայի մատչելիություն):
- Նախատեսված է «*ENPARD» ֆինանսական համաձայնագրում*
  - Բիզնես ուղղվածությամբ գյուղատնտեսների օրենսդրության ընդունում՝ միջազգային ստանդարտներին համապատասխան (չնայած որ արդեն ընդունված է, կան բացթողումներ՝ հիմնականում կապված հարկային խնդիրների հետ, որոնք խոչընդոտներ են հանդիսանում կոոպերատիվների բիզնես գործողությունների համար):
- Նախատեսված է *Կառավարության ծրագրում*
  - Կոոպերատիվների աջակցության պետական ծրագրի իրականացում
- Բարձրացվել է *ֆոկուսային խմբերով* քննարկումներում:

1.4. Գյուղատնտեսության շուկայում արդար մրցակցությունն ապահովող քաղաքականությունների բարելավման և ջատագովության անհրաժեշտություն:

- Նախատեսված է *Կառավարության ծրագրում*
  - Գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակցության երկրորդ ծրագրի գործարկման շարունակում:
- Բարձրացվել է *ֆոկուսային խմբերով* քննարկումներում:

ՈԼՈՐՏ 8. ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Խնդիրներ.

1.1. **ՔՀԿ-ների մասնակցության մեխանիզմների թույլ մակարդակ տեղական աճի ռազմավարություններում և «խելացի համայնք» նախաձեռնություններում, այդ ռազմավարությունների և նախաձեռնությունների բարելավման, ջատագովության, մշտադիտարկման և դրանցում ՔՀԿ-ների ավելի մեծ ներգրավվածության ապահովման անհրաժեշտություն:**

1.2. **Տեղական տնտեսական զարգացման պլանների հաջող իրականացման բարելավման և մշտադիտարկման անհրաժեշտություն:**

1.3. **ՏԻՄ-երում հանրային կառավարման բարեփոխումների բարելավման, մշտադիտարկման և ջատագովության անհրաժշտություն:**

- Տնտեսական զարգացումն ավելի ընդհանրական իմաստով նախատեսված է «*CEPA*»-ում:
- Նախատեսված է *«2020» փաստաթղթում՝ Բաժին 6. Աշխատանքի նոր հնարավորություններ տեղական և մարզային մակարդակում*
  - Մասնագիտակցման խելացի ռազմավարություններ, որոնք հատկորոշում են առանցքային առաջնահերթությունները տնտեսական մոդեռնիզացման համար՝ մշակված առնվազն երկու երկրներում:
  - Տեղական իշխանությունների կողմից տեղական տնտեսական զարգացման ծրագրի իրականացում, և առնվազն 10 քաղաքային դեմոնստրացիայի ծրագրերի գործարկում «Քաղաքապետները հանուն տնտեսական աճի» ծրագրի շրջանակներում:
  - Մարզային զարգացման ծրագրերի իրականացում նրանց խողովակաշարի և/կամ մարզային զարգացման հիմնադրամի միջոցով:
  - Մարզային/տեղական շահակիցների մասնակցություն համապատասխան տեղական խողովակաշարի պլանավորման և իրականացման մեջ:
- Նախատեսված է ընդհանուր տեսքով *Կառավարության ծրագրում:*
  - Մարզերում տնտեսական զագացման ապահովում,
  - Մարզային զարգացման ֆոնդերի սխեմայի ներդրում,
  - Պետական բյուջեից, դրամաշնորհներից և այլ աղբյուրներից ֆոնդերի վերհանում, որի միջոցով մարզերում գործառական պլանների մի մասը կֆինանսավորվի:

ՈԼՈՐՏ 9. ԷՆԵՐԳԵՏԻԿԱ

Խնդիրներ.

.1. **Գյուղական կանաչ տնտեսության և մաքուր էներգիայի նախաձեռնությունների բարելավման և մշտադիտարկման, դպրոցներում այս խնդիրների ջատագովության անհրաժեշտություն:**

- Նախատեսված է «*CEPA»-ում.*
    - Էներգետիկայի հարցերի շուրջ համագործակցություն՝ ապահովելով ապահով և էկոլոգիապես մաքուր էներգետիկայի մատչելիություն:
    - Կանաչ տնտեսության միջոցառումների և էկո-նորարարության խթանում, անհրաժեշտ մարդկային և ֆինանսական ռեսուրսների ու վերանայման մեխանիզմի հատկորոշում:
- Նախատեսված է «*2020» փաստաթղթում՝ Բաժին 16. Շրջակա միջավայր և հարմարեցում կլիմայի փոփոխություններին*
    - Կանաչ տնտեսության ծրագրերի մշակում և ընդունում:

.2. **ՏԻՄ-երի էներգարդյունավետության նախաձեռնությունների մշտադիտարկման և բարելավման անհրաժեշտություն:**

.3. **Հանրային աշխատանքների գործընթացում (օրինակ՝ պետական գնումներ) էներգարդյունավետություն ապահովող կանոնակարգերի և կարգավորիչ միջոցների լավագույն փորձի հիման վրա հանրային քաղաքականությունների մշակման և (կամ) բարելավման ու ջատագովության անհրաժեշտություն:**

- *Նախատեսված է «CEPA»-ում*
    - Համագործակցություն էներգետիկայի հարցերի շուրջ՝ ապահովելով ֆինանսպես հասանելի էներգիայի մատչելիությունը և էներգարդյունավետության և էներգախնայողության գաղափարների տարածում:
- Նախատեսված է «*2020» փաստաթղթում՝ Բաժին 15. Էներգարդյունավետություն և վերականգնվող էներգիա*
    - Էներգարդյունավետության միջոցառումներ, այսինքն՝ ավելի լավ աշխատող ջեռուցման համակարգեր, էներգարդյունավետ հանրային տրանսպորտ/լուսավորություն: